

ԳԱՆՁԱՍԱՑ ՍԱՐԴԻՍ ԱՆԵՑԻ

Ա. Մ. ՔՅՈՇԿԵՐՅԱՆ

Հնագույն շրջանի Գանձարաններից մեղ հայտնի են ոմն Սարգսի անունով մի շարք գանձեր: Նրանց խորագրերում հեղինակը հիշվում է մերթ իբրև Սարգիս փիլիսոփա, մերթ Սարգիս վարդապետ: Այդ անունն արտահայտված է նաև ծայրակապով՝ «Սարգսի երգ» (կամ աղմատված՝ «Սարգսի եղգ») ձևով: Նշված գանձերը ձեռագրերում ընդհանրապես ներկայանում են առանձին-առանձին, ցրված, իսկ նրանց հեղինակ Սարգսի մասին կենսագրական տեղեկություններ չեն պահպանվել: Որոշ բանասերներ նրան նույնացրել են XII դարում ապրած Սարգիս Շնորհալու հետ¹, թերևս այն պատճառով, որ վերջինիս վերագրվում են նաև շարականներ, ճառեր ու հորգորներ: Սակայն Շնորհալու անունը չի հանգիպում վերոհիշյալ գանձերից որևէ մեկում, և ընդհանրապես Գանձարաններում նա երբեք չի հիշվում իբրև գանձի հեղինակ: Նման ակնարկ չի եղել նաև Սարգիս Շնորհալու գրական ժառանգությունը ներկայացնող զանազան աղբյուրներում, հետևապես այդ գանձերը նրան վերագրելու ոչ մի հիմք չունենք: «Սիոն» ամսագրում, որտեղ պարբերաբար հրատարակվում են հնագույն գանձերի ու տաղերի նմուշներ, նորայր եպս. Պողարյանը 1950 թ. տպագրում է Սարգսի անունը կրող երկու դանձ², բայց հեղինակի մասին ոչ մի լրացուցիչ տեղեկություն չի տալիս: Այսպիսով, բանասիրության համար մինչև հիմա էլ հարց է, թե ո՞վ է այդ գանձերի հեղինակ Սարգիսը, ե՞րբ է ապրել և որտեղացի՞ է եղել:

Այս տեսակետից առանձին հետաքրքրություն է ներկայացնում Փարիզի Աղդային Մատենադարանի Հայկական ֆոնդի № 80 Գանձարանը³, որը բովանդակում է Սարգսի անունով յոթ գանձ: Դրանք ձեռագրերից մեզ հայտնի հինգ գանձերն են, որոնք այստեղ ավելի են երկու նոր նմուշներով: Պարզ է ուրեմն, որ Փարիզի № 80 ձեռագրում եղած գանձերը գալիս են Սարգսին ավելի հարազատ մի սկզբնաղբյուրից, ուր նրանք գեռևս ներկայանում էին առավել ամբողջական տեսքով: Այդ ձեռագիրը մի շատ ուշադրավ ընդօրինակություն է՝ կատարված 1580 թ. Ղրիմում: Հետաքրքրականն այն է, որ այստեղ գանձերից մեկի խորագրում հիշվում է ոչ միայն Սարգսի փիլիսոփա կոչվելը, այլև որտեղացի լինելը և տոհմանունը: Ահա այդ խորագիրը՝ «Վեցեուրոյ

1 Բ. Կյուլենսբրյան, Տուցակ հայերեն ձեռագրաց Կարմիր-վանուցն Անկյուրիո, Անթիպատ, 1956, էջ 836:

2 «Սիոն», 1950, էջ 144, 186: Այդ գանձերը, որ հրատարակվել են ըստ Երուսաղեմի № 231 ձեռագրի, կան այս հոդվածին կից բերվող գանձերի ցանկում՝ Փարիզի № 80 ձեռագիր, 4-րդ և 6-րդ գանձեր, Մատենադարանի № 4068 ձեռագիր, 4-րդ գանձ:

3 Նշված ձեռագրի միկրոժապավենը Մաշտոցի անվան Մատենադարանի խնդրանքով վերջերս ստացվեց Փարիզից: (Այն պահվում է Մատենադարանի միկրոժապավենների ֆոնդի 459 թվահամարի տակ):

աուր Բարոզ ասացեալ Սարգիս փիլիսոփայի Տաւնկաց Անեցոյ ի ծնունդն Քրիստոսի և ի յարութիւն Ղազարու» (թերթ 54բ)։

Այսպիսով, Փարիզի № 80 Գանձարանը բացառիկ աղբյուր է Սարգսի տնունով գանձերի ուսումնասիրության համար։ Այդ Գանձարանի մեջ է, որ առաջին անգամ տեսնում ենք Սարգսի նշված ստեղծագործությունների համեմատաբար ընդհանուր պատկերը։ Եվ, որ ամենից կարևորն է, այդտեղից առաջին անգամ իմանում ենք, որ մինչև այժմ անորոշ Սարգիս փիլիսոփայն Անեցի է, և պատկանել է Տաւնկաց տոհմին։

Հետաքրքրական է հիշյալ ձեռագրի Ղրիմում ընդօրինակված լինելու փաստը⁴։ Ղրիմն, ինչպես գիտենք, կապված էր Անիի հետ՝ ապաստան տալով այնտեղից դաղթած բազմաթիվ հայերի, որոնք իրենց հետ այդ նոր բնակավայրն էին բերում հայրենի քաղաքի մշակութային ավանդներն ու որոշ հուշարձաններ։ Հետևապես, պիտի ենթադրել, որ Ղրիմում ընդօրինակված վերոհիշյալ Գանձարանում տեղ գտած Սարգսի գանձերը կարող են կապվել անիական, համեմատաբար հարազատ ու հին, նախօրինակի հետ։ Այս առումով ուշադրալ է նաև այն, որ Սարգսի՝ ծննդյան տոնին նվիրված վերոհիշյալ գանձի առաջին տան որոշ տողերն ավարտվելով «անմահ թագաւոր», «մանուկ նոր», «աւրհնէին զանմահ թագաւոր» բառերով, հիշեցնում են նոր-նախիջեանի հարսանյադ երգերում կրկնվող «օրհնեց թագաւոր», «նոր թագաւոր ես նոր» արտահայտությունները⁵։ Նոր-նախիջեանի ժողովրդական այս երգերը, որոնք գրի են առնվել Ղրիմում XVI—XVII դարերում⁶, իրենց ակունքով կապվում են Անիի հետ։ Այսպիսով, և՛ Փարիզի ձեռագիրը՝ իր ընդօրինակության վայրով, և՛ գանձը՝ իր նշված առանձնահատկությամբ, գանձասաց Սարգսին յուրովի կապում են Անիի հետ։

Անեցի մի նոր հեղինակի ի հայտ գալը հետաքրքրական է նաև Անի քաղաքի մշակութային կյանքի ուսումնասիրության տեսանկյունից։ Հարցի այս կողմն արժանի է հատուկ ուշադրության, որովհետև ճարտարապետության, արհեստների, առևտրի բնագավառում, և ընդհանրապես զարգացման բարձր

⁴ Ձեռագիրն ունի ընդարձակ հիշատակարան, որտեղ պահպանված են ընդօրինակության վավերացումը՝ 1380 թ., նաև գրչի ու ստացողի անունները՝ Ծիշեցի... ստացողի սորայ՝ Աստուածաւոր միա(յ)նակեցի... և ինձ՝ Բազմադործ մեղաւորիս և տառապեալ ոգոյ՝ Մարկոսի փր(ց)ուն գրչի և ծնողաց իմոց՝ Յովանիսի և Խուր(վ)անդի...։ Գրեցաւ հոգիանորոգ քնարս աստուածային ի (Կաֆա)։ Ընդ հովանեաւ առ... սրբոյն Յակոբ(րայ Մծ)բնա Հայրապետի, ի հայրապետութեան Հայ(ոց) Կոստանդեայ, ի յաթոռակալութիւն ամենայն Հաւսական կողմանց՝ տւր Յովհանիսի կրանաւորի Սերաստացոյ, ի թվ. Հայոց Պիթ (1380), ի մարտի ամսոյ Ի (20) վճար եղև գրոյս...» (թերթ 377ա)։

Ձեռագրի միկրոթապակներ հնարավորություն չի ընձեռում կարգալու ընդօրինակության վայրը՝ Կաֆա. որովհետև հիշատակարանի այդ հատվածում թերթը պատռված է, ուստի այն յրացրել ենք ըստ Փր. Մակլերի՝ նշված ձեռագրի համար տված համառոտ նկարագրության (տե՛ս Fr. Maclier, Catalogue des manuscrits arméniens et géorgiens de la Bibliothèque Nationale, Paris, 1908, էջ 37)։ Ձեռագիրը Կաֆայում գրված լինելու մասին է վկայում նաև այն փաստը, որ հիշվող ս. Հակոբ Մծբնա Հայրապետի վանքը գտնվում էր այդ քաղաքում, որտեղ 1370—1391 թթ. միևնույն գրիչ Մարկոսի ձեռքով ընդօրինակվել են նաև այլ ձեռագրեր (տե՛ս «ՄԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կաղմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1959, էջ 494, 513, 548, 575, 595)։

⁵ Եր. Ն ա հ ա զ ի ղ, Նոր-նախիջեանը և Նոր-նախիջեանցիք, «Ազգադարական հանդես», VII—VIII, Թիֆլիս, 1901, էջ 93—94։

⁶ Ա. Մ. Մ ն ա ց ա կ ա ն, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 117—120, 465—471։

ւճակարդակի հասած Անիից համեմատաբար քիչ տվյալներ ունենք բանաստեղծների, մանրանկարիչների, մանկավարժների, երաժիշտների և դպրության այլ ճյուղերի մշակների մասին:

Փարիզի № 80 ձեռագրի պարզեցած նորությունն օգտակար է նաև մեր Գանձարանները և գանձեր գրող հեղինակներին ուսումնասիրելու առումով, որովհետև Սարգիս Անեցին իր գանձերի խմբով մեր առաջին գանձասացներից է, իսկ վերջիններիս թիվը, ինչպես նաև նրանց գանձերի քանակը, այնքան էլ մեծ չէ:

Արդ, ո՞վ է Սարգիս փիլիսոփա Անեցին: Նրա գանձերը բովանդակող Փարիզի № 80 ձեռագիրը, ինչպես նշվեց, 1380 թ. ընդօրինակություն է, ուստի մեզ հետաքրքրող հեղինակին պիտի որոնել մինչև XIV դարն ապրած անեցի Սարգիսների թվում: Նրանք մի քանիսն են և հայտնի գերագանցապես սոսկ անուններով (Սարգիս), առանց կենսագրական որոշակի տեղեկությունների: Ժամանակագրական առումով առաջինը, որ գրավում է մեր ուշադրությունը՝ XI դարում ապրած մի վարդապետ է: Նրա մասին տեղեկանում ենք Դր. Մագիստրոսի թղթերից, որոնցից շորսը՝ գրված 1042—1044 թթ., ուղղված են նրան: Հեղինակի այդ թղթերում հանդիպում են հիշյալ Սարգսի իմացական նորոգություններն ու պատրաստվածությունը ցույց տվող տողեր: Դիմելով նրան, Դր. Մագիստրոսը գրում է. «Ով վեհագոյնդ մտածութեան, քան զբոլորն հոնտորականն դաս»⁷, և կամ՝ «քանզի հզօր ես ի պուհտիկոսականն մատենագրութեան»⁸: Այստեղ օգտագործված «հոնտոր», «պուհտիկոս» որակումները, որոնք վկայում են Մարգսի քերթողական ունակությունները, որոշ հիմք են տալիս նրան նույնացնելու մեր նորահայտ գանձասացի հետ: Ինչ վերաբերում է Սարգիս Անեցու ապրած ժամանակին, ապա XI դարի առաջին կեսում միանգամայն հնարավոր էր նախորդ դարից սկզբնավորված գանձերի շարադրման և օգտագործման փորձը տեսնել Անիում:

Հեղինակին ճանաչելու հարցում առաջժամ չի օգնում նաև Անեցի մականվանը կից Տաեկայ տոհմանունը, որն իր հղումով հիշեցնում է Անիում օգտագործվող Աւշականց, Ծիլենց, Հոնենց և նման այլ տոհմանուններ: Անիական նրանց ունի նաև Նիկոլի որդի Ամինադինի անունը, որը հանդիպում է Սարգսի գանձերից մեկի խորագրում՝ «Ի մեծի կենսաբեւ յարութեանն ասացեալ զանձ Սարգիս փիլիսոփայի ի խնդրոյ պարոն Ամինադինին՝ հաւատարիմ ծառային Քրիստոսի, որ է որդի պարոն Նիկալին»:

Ամինադին անունը նման է Անիում և շրջակայքում հանդիպող Քարիմալին, Նուրադին, Ահմադին անուններին, որոնք «կրոն» բառով կազմված բառաբարդություններ են՝ արաբական ծագումով: Ամինադին՝ amīn-ad-dīn նշանակում է «ապահով կամ վստահ ի կրօնս»⁹: Ցավոք, մեզ հայտնի չէ, թե ո՞վ է պարոն Նիկոլի որդի Ամինադինը: Հ. Աճառյանի մոտ այդ անունը հիշվում է միայն XV դարից, իսկ ավելի վաղ շրջանից՝ XIII դարից, մեզ հայտնի է Ամալին անունը: Վերջինս հանդիպում է Անիի Առաքելոց եկեղեցու գավթի 1276 թ. արձանագրության մեջ և հիշվում իբրև դադմաչի (հարկային տեսուչ)¹⁰: «Ամալին» ձևը, որի «ամ» ածանցը, ի տարբերություն «դին» բառով

⁷ «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», հրատ. Կ. Կոստանյանց, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 51:

⁸ Նույն տեղում, էջ 57:

⁹ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Ա, Երևան, 1942, էջ 118:

¹⁰ Հ. Ա. Օրբելի, Դիվան հայ վիճագրության, պրակ 1. Անի քաղաք, Երևան, 1966, էջ 22:

կազմված մյուս անունների, դուրկ է իմաստից, հավանաբար հենց Ամինադինի ազգականներն է՝ ճիշտ այնպես, ինչպես Սամտին ձևը հանդիսանում է Սահմադինի ազգականը¹¹։

Իսկ շունենք բացահայտ տվյալներ, որոնք մեզ իրավունք տալին XIII դարում հանդես եկող այդ Ամտինին նույնացնելու Սարգսի գանձի խորագրում հիշվող Ամինադինի հետ, այնուամենայնիվ, դա անհավանական չի թվում։ Այս կապակցությամբ ուշագրավ է նաև հետևյալ փաստը. Փարիզի № 80 ձեռագրում Գեորգ վարդապետ Սկևռացու անունով մի գանձի խորագրում կա հիշատակություն Սարգիս փիլիսոփայի մասին. «Քարոզ... ասացեալ Գեորգեա վարդապետի Սկևռացոյ, ի խնդրոյ սննդակից եղբաւ Սարգիս փիլիսոփայի» (Թերթ 96ա)։ Եթե այստեղ հիշվող Սարգիս փիլիսոփան նույն ինքն Սարգիս Անեցին է, ուրեմն վերջինս պետք է լինի Գեորգ Սկևռացուն ժամանակակից, այսինքն, լայրած լինի XIII դարի երկրորդ կեսում։

Հետաքրքրական է նկատել, որ ձեռագրերում հանդիպում է մի գանձ՝ «Գեորգ Անեցի» ծայրակապով, և Գեորգի անունով եղած գանձերը, որոնք ընդհանրապես հայտնի են իբրև Սկևռացու ստեղծագործություններ, երբեմն վերագրվել են նշված Գեորգ Անեցուն¹²։ Անեցի և Սկևռացի Գեորգների ինքնության ճշգրտումը ենթակա է առանձին քննության։ Պարզ է սակայն, որ մենք պետք ունենք երկու տարբեր հեղինակների հետ, որոնցից մեկը՝ Գեորգ Սկևռացին, գրել է «գանձս յոլովս տաւնից տէրունականաց և սրբոց Աստուծոյ»¹³։ Ինչդեռ Գեորգ Անեցին (որին Ղ. Ալիշանը առանց հիմնավոր պատճառի նույնացնում է Սամվել Անեցու ուսուցիչ՝ ժամանակագիր Գեորգի հետ) մեզ հայտնի է լոկ մեկ գանձով։ Վերջինս իր տաղաչափությամբ տարբերվում է Սկևռացու գանձերից և առավել մոտ է Սարգիս Անեցու՝ ծննդյան տոնի վեցերորդ օրվան նվիրված գանձին։

Այսպիսով, առայժմ ճշտվում է այն, որ XI—XIV դարերում Անիում եղել է Սարգիս անունով մի գանձասաց, որը, ինչպես երևում է նրա փիլիսոփա կոչումից, եղել է ժամանակի կրթված ու զարգացած մտավորականներից մեկը։ Եւ, ըստ երևույթին, փիլիսոփա է կոչվել իր երաժշտական իմացությունների համար, ուստի իր գանձերի եղանակներն էլ պիտի որ ինքն ստեղծած լիներ։

Այժմ անդրադառնանք Սարգիս Անեցու գանձերին, որոնք առանձին նմուշներով մեզ հայտնի են XIII—XIV դարերի նաև ինն այլ ձեռագրերից, որոնցից երկուսը ծաշոց է, իսկ մյուսները՝ Գանձարան։ Նշված գանձերից բացի, Սարգրսի անունով մեզ հայտնի է ևս մի գանձ՝ լոկ մեր Մատենադարանի № 4063 ձեռագրից։ Սակայն այս վերջինը, ինչպես նաև վերոհիշյալ յոթ գանձերից մեկը պիտի որոշ վերապահությամբ ընդունեն իբրև Սարգսի ստեղծագործություն։ Էական ենք համարում Սարգսի նշված ստեղծագործությունների մի քանի առանձնահատկությունները, որոնք վկայում են եթե ոչ նշված բոլոր ութ գանձերի, դեթ նրանցից վեցի մեկ հեղինակի՝ տվյալ դեպքում Սարգիս Անեցուն։ Այս տեսակետից ուշագրավ է առաջին հերթին այն փաստը, որ

«Գաղմաշի» բառը հանդիսանում է «ղամղաշի»-ի ազգականը, տե՛ս Բ. Առաքելյան, Քարտեզը է արհեստները Հայաստանում IX—XIII դդ., 2, Երևան, 1964, էջ 215—216։

¹¹ H. M a p p. Ани. А.—М., 1934, էջ 42։

¹² Ղ. Ալիշան, Շնորհալի և պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 126։ Տե՛ս նաև Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Ա, էջ 461։

¹³ Գ. Ջարպետյան, Հայկական մատենագիտություն, Վենետիկ, 1883, էջ 139։

նրանք բոլորը միասին են Փարիզի № 80 ձեռագրում և աչքի են ընկնում մի քանի ընդհանուր հատկանիշներով: Այստեղ նկատի ունենք նախ՝ նրանց խորագրերում հեղինակի անվանը կից հանդիպող փիլիսոփա, վարդապետ, կաթողիկոսների վարդապետ կոչումները: Այդ գանձերը սկսվում են «արքային», «սուրբաբանալ», «սուրբապետ» բառերով և ծայրակայանքը հոգում են «Սարգսի եղբ» (բացառությամբ մեկի): Նկատելի է նաև, որ բոլորն էլ, բացի Մատենադարանի № 4068 ձեռագրում գտնվող տարակուսելի մեկ գանձից, նվիրված են տերունական տոներին՝ Մանուկ, Տյառնընդառաջ, Հարություն և Համբարձում, մեծ մասամբ զույգ գանձերով: Բ դեպ, պիտի նշել, որ ծննդյան երկու գանձերը հատկացված են ծննդյան տոնի տարբեր օրերի՝ երրորդ և վեցերորդ:

Գանձերից երեքը խիստ նման են միմյանց իրենց անհանգու աղատ շափով, կրկնակներով, տեսակզբի բառերով, առանձին արտահայտություններով. երբեմն էլ ամբողջ տողերով: Սրանց է նմանվում նաև «Քարագ մեծի առաջ Սաղկազարդին և կենսաբեր Համբարձմանն Քրիստոսի» խորագրով գանձը: Խորագրում, ինչպես տեսնում ենք, նշված է երկու տոն, շնայած գանձն իրականում նվիրված է մեկին, տվյալ դեպքում՝ Համբարձմանը, և Սաղկազարդի մասին գանձում որևէ ակնարկ չկա: Հայտնի է, որ այս տոները միասին չեն կատարվել, բայց Համբարձման տոնին ընթերցվել է Հովհաննեսի ավետարանի ԺԲ գլխի Սաղկազարդին վերաբերող հատվածը, որով և բացատրվում է զույգ տոների խորագրային հիշատակությունը. սա մի առանձնահատկություն է, որ նկատվում է նաև Սարգիս Անեցու՝ Մանուկյան վեցերորդ օրվան նվիրված գանձում: Այսպիսով, սույն գանձը մի կողմից կապված է վերոհիշյալ երեքի, իսկ մյուսով՝ Սարգիս Անեցու անունով պահպանված գանձի հետ:

Սարգիս Անեցու՝ Մանուկյան վեցերորդ օրվան նվիրված գանձը, որի խորագրում պահպանվում է հեղինակի լրիվ անունը¹⁴, առանձնապես ուշագրավ է նրանով, որ հրված է հնագույն գանձերին բնորոշ աղատ բանաստեղծությամբ, և միաժամանակ հանգավորված է: Այդ տեսակետից նույնքան հետաքրքրական է Հարության տոնին նվիրված Սարգսի մի գանձը, որը ոչ միայն հանգավորված է, այլև ունի որոշակի չափ՝ 4—5 (երբեմն 5—5) ոտքով: Այս գանձը, որի խորագրում նշված է նաև պատվիրատուի՝ պարոն Նիկոլի որդի Ամինադինի անունը, ունի կարևոր մի հատկանիշ՝ տնավերջի հանգերը հոգում են «Ամինադին»:

Ի տարբերություն Սարգիս Անեցու վերոնշյալ վեց գանձերի, մնացյալ երկուսի նկատմամբ, հեղինակային պատկանելիության առումով, պետք է ցու-

¹⁴ Փարիզի № 80 ձեռագրից մեկ հայտնի այս գանձը հանդիպում է նաև Մաշտոցի անվան Երևանադարանի № 4068 ձեռագրում, որտեղ այն վերջից թերի է, և մյուսի համեմատությամբ ունի րնագրային սոսկ աննշան տարբերություններ, իսկ ծայրակայանք ոչ թե «Սարգսի եղբ» է, այլ՝ «Քարսղի»: Ուշագրիք քննությունը ցույց է տալիս, որ գրեթե միևնույն ժամանակ ընդօրինակված այդ երկու ձեռագրերից № 4068-ի Գանձարանում տեղ գտած «Քարսղի» գանձը, որ ձեռագրի սկզբում է, ընդօրինակվել է Գանձարանի ավարտվելուց հետո մի այլ՝ ավելի նոր նախօրինակից: Ուստի, առավել հին է ու անաղարտ Փարիզի № 80 ձեռագրի գանձը: Ինչ վերաբերում է «Քարսղի» ծայրակայանքին, ապա դա միջամտություն է՝ կատարված ոմն Բարսեղի ձեռքով: Վերջինս նկատելով, որ այդ գանձի խորագրում և տեքստի մեկում առկա է նաև Ղազարոսի Հարության տոնի հիշատակությունը, այն համարել է անհարկի և կրճատել համապատասխան նշումներն ու տողերը: Հաս այդմ էլ, նա իրեն իրավունք է վերասպանել աննշան փոփոխություններ մտցնել տեսակզբի բառերի մեջ և «Սարգսի» փոխարեն ստանալ իր անունը՝ «Քարսղի»: անուն, որի հետ կապվող ոչ մի պատճառ չարդ հայտնի չէ:

ցաբերել որոշ վերապահություն: Դրանցից մեկը Սարգիս փիլիսոփայի անունով է լուկ խորագրում, իսկ ծայրակապում ունի «Գսիպորի եզգ» («Գրիգորի՞ Լիգ») ձևը, և սկսվում է Դանձ բառով: Այնուամենայնիվ, իր շափով ու հանգով նմանվում է Հարություն մեզ արդեն հայտնի վերոնշյալ գանձին: Երկրորդը Էվիրված է Սարգիս զորավարին, գտնվում է միայն մեր Մատենադարանի N 4068 ձեռագրում: Ճիշտ է, ունի «Սարգսի եզգ» սովորական ծայրակապը և մյուսների նման սկսվում է «սրբություն» բառով, բայց խորագրում հեղինակի անունը չի պահպանվել: Հետևապես, ծայրակապում հիշված «Սարգիսը» կարող է վերաբերել նաև բովանդակությանը, նկատի ունենալով Սարգիս զորավարին:

Այժմ մի քանի խոսք՝ Սարգիս Անեցու գանձերի բովանդակության ու գեղարվեստական առանձնահատկությունների մասին:

Գանձերը, որոնք, ինչպես գիտենք, օգտագործվել են եկեղեցական արարողությունների ժամանակ, բնականաբար, իրենց բովանդակությամբ պետք է համապատասխանեն հոգևոր երգի իրենց կոչմանը: Այսուհանդերձ, վերջին մասում, որտեղ հիշատակվում են եկեղեցու հոգևոր առաջնորդներն ու երկրի տերերը (իշխաններ, թագավորներ), առավել կամ նվազ չափով արտահայտված են լինում ժողովրդի հոգսերն ու տենչերը: Սարգիս Անեցու գանձերում քիչ չեն այնպիսի տողերը, որոնցում հեղինակը հայցում է Տիրոջ ողորմածությունը հասարակության բոլոր անդամների համար՝ արանց ու կանանց, երիտասարդների ու ծերերի, պետերի ու իշխանների, հաճախ խնդրելով նաև անձրևների առատություն, բերքի լիություն, այգիների պտղաբերություն, որոնցով գանձերն ավելի են առնչվում ժողովրդի առօրյային, նրա կենցաղի հետ:

Եւ յաշխարհական կարգէ՝ զարս և ըզկանայս
Ըստ Բումդ իրաւանց Բաղաֆաւարիլ.
Զծերս և զմանկունս,
Զերիտասարդ և զկուսանս,
Զիշխանս և ըզպետս,
Ըզգաւաւարս և զիշխանութիւնս.
Պարկեա՛, առատապարզ և Տէր,
Ըզպիտանացուն՝ ի հաւդէս մերոյ փրկութեան.
Աղոց բաբխառնութիւն.
Անդաստանաց պտղաբերութիւն,
Թուոց և տունկոց անըւագութիւն,
Աղբերացն առատութիւն,
Անձրեւածին ամպոց Բաղցրութիւն,
Մառդկան Բաւութիւն և առողջութիւն:

Գանձերում երկրի կյանքն ինչ-որ չափով արտացոլելու այս եղանակը հատուկ չէ սոսկ Սարգիս Անեցուն: Նման տողեր պատահում են հին ու նոր նաև այլ հեղինակների ստեղծագործություններում:

Ինչ վերաբերում է Սարգիս Անեցու գանձերի տաղաչափական առանձնահատկություններին, այստեղ հետաքրքրականն այն է, որ հեղինակը գրում է կամ ազատ չափով՝ մերթ անհանգ, մերթ հանգով, կամ էլ և՛ հանգով, և՛ չափով:

Այսպես, օրինակ. գանձերից երեքը, որոնք նվիրված են Քրիստոսի Մնընդյան, Տյառնընդառաջի և Համբարձման տոներին, գրված են ազատ բանաստեղծությամբ:

տեղծությամբ, հատկանիշ, որը բնորոշ է հնագույն շրջանի գանձերի և առհասարակ բանաստեղծությունների մեծագույն մասին: Սարգիս Անեցու նշված գանձերը, որոնք կազմված են բավական երկարաշունչ տներից և ունեն առավելապես պատմողական բնույթ, ինչպես արդեն ասվել է, խիստ նման են միմյանց և համեմված են գեղեցիկ պատկերներով ու համեմատություններով, մանավանդ Աստվածամոր համար:

Անպատ անկոխ՝ ցանկեալ շուշանաւ,
Քաղաք կենդանի՝ շինեալ մառամբն Աստուծոյ...
Խորան ամպայարկ՝ բազմազան զունով նրկաբեալ
Քառանիւրիցն յարմարութեամբ,
Ոսկեղէն և արծաթապատ սեմաւ կառուցեալ.
Կրկին տախտակ կենդանի՝
Ձևամբն Յիսուսի յարինեալ, յըղկեալ՝
Ի պարսաստուրին՝ զրելոյ մատինն անեղին:

Ի տարբերություն նշված օրինակների, հեղինակի մի այլ գանձը՝ նվիրված Ծննդյան վեցերորդ օրվան, աչքի է ընկնում իր հետևողական, բայց փոփոխվող հանգավորումով (որ, եալ, ից, ի, ոյ, ին, ան): Որքան մեղ հայտնի է, ազատ չափի և հանգի նման զուգակցումը գանձերի համար ոչ սովորական մի՛ նրկույթ է, և Սարգիս Անեցու անունով այս գանձն առայժմ մեղ հայտնի միակ նմուշն է:

Տապանակ արկղակերտ և տախտակ աստուածագիծ կրտսկին.
Վէմ աղբերանու և երկիր բանաւոր, երփնագեղ ծաղկին...
Լեռքն զըմբոսոյ և բլուր անուշանուտ կլնդրկին,
Հովիտ շուշանի և նարդուս քրքմածին:

Հեղինակի այս ստեղծագործության մեջ հաճախ են հանդիպում որոշակի չափով գրված տողեր. ևրկույթ, որն ի վերջո պետք է հանդեցներ գանձերը չափով ու հանգով գրելու սկզբունքին: Իրա ցայտուն օրինակն է միևնույն հեղինակի գրած Հարություն տոնին նվիրված գանձը՝ 4—5 չափով, որտեղ հանգավորված են զույգ տողերը, իսկ կենտ տողերը՝ ոչ:

Երկրպագեմք Յարութեան Փրկչիդ
Ձխաղաղութիւն երկրի առաքնԱ.
Եւ վերստին զաշխարհս ամենայն
Ի դիւական հաղթիցն ազատեԱ:

Այստեղ պահպանված է ոչ միայն չափն ու հանգը, անխախտ է նաև տողերի քանակը՝ 24 (բացի վերջին տնից, որը 34 տող է):

Չափի ու հանգի նշված բազմազանությունից բացի, Սարգիս Անեցու մոտ նկատվում է նաև ծայրակապային մի այնպիսի առանձնահատկություն, որը նույնպես ուշադրավ նորություն է: Խոսքը Հարության վերոնշյալ գանձում վերջնահանգերով կազմված իմաստային ծայրակապի մասին է, որն, ինչպես ասվել է, հոդում է գանձի պատվիրատուի՝ Ամինադիին անունը: Նման օրինակներ մեղ հայտնի են տաղերից, բայց ոչ՝ գանձերից:

Հետաքրքրական է նաև Սարգիս Անեցու գանձերի լեզուն և ոճը, որը նույնպես միատարր չէ և դա, ըստ ևրկույթին, հանգի ու չափի ոչ միատեսակու-

թյան պատճառով: Օրինակ, եթե Մենդյան վեցերորդ օրվա գանձում տողերի հանգավորումը նրան հաղորդում է որոշ երաժշտականություն, ապա Հարուսթյան՝ վերևում նշված գանձում, հանգի ու շափի խստորեն պահպանված կարգը այդ առումով առաջ է բերում որոշ կաշկանդվածություն և ստացվում են միօրինակ ու միապաղաղ տողեր: Դրան հակառակ, շատ բանաստեղծական ու ճոխ է անհանգ և աղատ շափով գրված գանձերի լեզուն, հարուստ գեղեցիկ համեմատություններով, պատկերավոր դարձվածքներով, համահնչյուն բառերի կուտակումներով: Համբարձման տոնին նվիրված գանձերից երկրորդը, որն իր բնույթով ավելի գովաբանական է, աչքի է ընկնում հաճախակի օգտագործվող բաղաձայնություններով: Այսպես, օրինակ.

Սրբույթին սիրոյ սիրելոյ սահմանի...
Անբաւ, բաւական, բան բարի,
Անպարագիծ և ածվայրափակ...
Բարունոյ բանիդ բազմունակ, բերաբերօ բերաւ ի գբարի...
Հրահոս Էովանի հնացեալ, մերկացեալ, կերպացեալ...
Բազդուն, շարժուն, հաստատուն, տրամադիր...

Հիմնականում սրանք են այն հատկանիշները, որոնցով բնորոշվում են Սարգիս Անեցու գանձերը: Շնորհիվ նրանց, Սարգիս Անեցին դառնում է հնագույն շրջանի բանաստեղծ-գանձասացների ուշագրավ դեմքերից մեկը: «Փիլիսոփա» մականունը ավելի է մեծացնում հետաքրքրությունը նրա նկատմամբ: Դա միաժամանակ հանդես է գալիս իբրև Անիի գանձասաց հեղինակների առաջին խոշոր ներկայացուցիչը: Արվեստի շգնադանցված կոթողներով հըռչակված Բագրատունիների մայրաքաղաքը, ցավոք, հետագա դարերին է փոխանցել գրական գործիչների լոկ մի քանի անուն: Այս առումով անեցի մի նոր բանաստեղծի ի հայտ գալը ստանում է առանձին կարևորություն: Ուշագրավ են նաև Տաւնկաց Սարգսի գանձերի շնորհիվ մեզ հայտնի դարձած նիկոլի և նրա որդի Ամինադինի անունները: Հուսանք, որ հետագայում կգտնվեն լրացուցիչ փաստեր, որոնք լույս կսփռեն այս նորահայտ անեցիների կյանքի ու գործի վրա:

Նկատի ունենալով, որ Սարգիս Անեցու գանձերի ուսումնասիրության համար առանձնապես կարևոր են Փարիզի Ազգ. Մատենադարանի № 80 և Մաշտոցի անվան Մատենադարանի № 4068 գանձարանները, նպատակահարմար ենք գտնում կից ներկայացնել այդ գանձերը խորագրերով, ծայրակապերով ու սկզբնատողերով, ըստ նշված ձևադրերում նրանց ունեցած հաջորդականություն.

ՓԱՐԻԶԻ ԱՂԻԱՏՈՒՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ, Ձեռ. № 80

1. Երբորդ ատուք երանելոյն Սարգիս վարդապետին ասացեալ ի Մնունդն Բրիստոսի («Սարգսի երգ») — Սրբութիւն սրբութեանց, Աստուած համայնից և տէր բոլորից... (35ա—38ա):

2. Վեցերորդ ատուք Բարոզ ասացեալ Սարգիս փիլիսոփայի Տաւնկաց Անեցւոյ և Մնունդն Բրիստոսի և ի Յարութիւն Ղազարու («Սարգսի երգ») — Սրբաբանեալ բոլորից Աստուած... (54բ—59ա):

3. Քարոզ Տեառնլնդառաջին, Սարգիս վարդապետի ասացեալ («Սարգսի երգ») — Սրբութիւն սրբութեանց տէր թագաւոր, հայր երկնաւոր... (78ա—82ա):

4. Ի մեծի կենսաբեր Յաւութեանն ասացեալ զանձ Սարգիս փիլիսոփայի ի խնդրոյ պարոս Ամինադինին՝ հաւատարիմ ծառային Քրիստոսի, որ է որդի պարոն Նիկալին («Սարգսի է եզզ», տների վերջնահանգեր՝ «Ամինադին») — *Սրովբէական ձայնիւ նրագեմք...* (169ա—173ա)։

5. Գանձ Յաւութեանն Քրիստոսի, Սարգիս փիլիսոփայի ասացեալ («Դսիգորի էզզ») — *Գանձ հայրենի ճշմարիտ աւանդ...* (183ա—188ա)։

6. Քարոզ մեծի Համբարձմանն Քրիստոսի, ասացեալ երանելի Սարգսի վարդապետի («Սարգսի էզզ») — *Սրբութիւն սրբոց, Աստուած անըսկիզբն...* (199ա—203ա)։

7. Քարոզ մեծի աւուր Մաղկազարդին և կենսաբեր Համբարձմանն Քրիստոսի («Սարգսի ա(եզ)ի») — *Սրբութիւն սիրոյ սիրելոյ...* (207ա—210բ)։

ՄԱՇՏՈՅԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ, ՁԵՌ. № 4068

1. Քարոզ Մենդի («Բարսղի») — *Բարեբանեալ բոլորից Աստուած...* (6բ—8բ)։

2. Քարոզ Մենդի («Սարգսի էզզ») — *Սրբութիւնք սրբութեանց, Աստուած համայնից և տէր բոլորից...* (18ա—23ա)։

3. Քարոզ Տեառնոնդառաջի («Սարգսի էզզ») — *Սրբութիւն սրբութեանց, տէր ըազաւոր, Հայր երկնաւոր...* (47ա—50բ)։

4. Քարոզ Համբարձմանն Տեառն ի Սարգսէ («Սարիզ») — *Սրբութիւն սրբութեանց, Աստուած անըսկիզբն...* (103բ—108բ)։

5. Քարոզ Սարգսի զաւրավարին և որ(դոյ) Մարտ(իրոսին) («Սարգսի էզզ») — *Սրբութիւն սրբոց ամենաւրհնեալ սուրբ երրորդութիւն...* (224ա—230ա)։